ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ

ՀԵՐԳՆՅԱՆ ՄԱՐԻԱՄ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,
ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի փոխդեկան
էլփոստ՝ m.hergnyan@gsu.am
ԲԱԼԱԳՈԶՅԱՆ ՄԵՐԻ
ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի
մագիստրատուրայի «Տնտեսագիտություն» բաժնի շրջանավարտ
էլփոստ՝ balagozyan98@mail.ru

Հոդվածը նվիրված է Գեղարքունիքի մարզում գյուղատնտեսության ոլորտի պետական օժանդակության ծրագրերի իրականացման գործընթացում առկա հիմնախնդիրների բացահայտմանը:

Տնտեսական զարգացման ծրագրերը՝ որպես տնտեսության պետական կարգավորման հիմնական ձևեր, պետության տնտեսական գործունեությունն ուղղում են ռազմավարական կարևորագույն նշանակություն ունեցող հիմնախնդիրների լուծմանը: Գյուղատնտեսության, որպես ՀՀ տնտեսության ռազմավարական նշանակություն ունեցող գերակա ճյուղի զարգացման համար կենսական նշանակություն ունեն պետական օժանդակության ծրագրերը: Գյուղատնտեսության ոլորտի՝ ՀՀ կառավարության կողմից առաջարկվող պետական օժանդակության ծրագրերի հիմքում բարձրարժեք, նորարար, արտահանմանը միտված, արդյունաբերական գյուղատնտեսության խթանման տեսլականն է, որը շահառուներին հնարավորություն է տալիս ժամանակակից աշխարհի պահանջներին համաքայլ ստեղծել և զարգացնել իրենց ագրոբիզնեսը:

Կատարվել է Գեղարքունիքի մարզում գյուղատնտեսության ոլորտի պետական օժանդակության 2018-2020թթ.-ի ծրագրերի իրականացման գործընթացի վերլուծություն, բացահայտվել են գյուղատնտեսության ոլորտում արտադրության զարգացման և ընդլայնման համար առկա հիմնախնդիրները: Նկատի ունենալով բուսաբուծության և անասնաբուծության զարգացման առանձնահատկությունները՝ առաջադրվել են դրանց լուծման մեխանիզմներ, որոնք կապահովեն գյուղատնտեսական ապրանքների արտադրության, իրացման և բարձր շահութաբերություն ակնկալող գործունեության իրականացման կամ ընդլայնման հնարավորություններ:

Վերլուծությունների արդյունքում կատարվել են համապատասխան եզրակացություններ, արվել են առաջարկություններ:

Բանալի բառեր՝ *պետական օժանդակության ծրագրեր, շահառու, լիզինգառու, կանխավճար, գոկոսադրույքների սուբսիդավորում, վերադարձելիության երաշխիք*:

Տնտեսության կայունացման գործում կենսական նշանակություն ունի գյուղատնտեսությունը, որտեղ արտադրվում են ոչ միայն գյուղմթերքներ՝ սպառման նպատակով, այլև գյուղատնտեսական հումք՝ արդյունաբերության մեջ իրացնելու նպատակով: Գյուղացիական տնտեսությունների կողմից արդյունավետ արտադրության կազմակերպման միջոցով բավարարվում է գյուղատնտեսական արտադրանքի նկատմամբ բնակչության պահանջարկը, որը խթանում է թողարկված արտադրանքի իրացումը, հողատեսքերի և մյուս ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացումը: Պետական օժանդակության ծրագրերն ուղղվում են ոլորտի զարգացմանն ու ենթակառուցվածքների ապահովմանը, իրականացվում են տարբեր մեխանիզմներով, այդ թվում՝ պետական միջոցներով, որոնք ընդունված է կիրառել ինչպես զարգացած, այնպես էլ աղքատ երկրներում: ՀՀ տնտեսության սոցիալ-տնտեսական զարգացման նպատակով գյուղատնտեսությանը տրամադրվող պետական օժանդակության ծրագրերն ունեն կարևոր ռազմավարական նշանակություն, ապահովում են ՀՆԱ–ի 20%-ը և զբաղվածության 40%-ը: 2019թ.-ին գյուղատնտեսությանը հատկացված օժանդակության ծրագրերը կազմել են գյուղատնտեսության կողմից ստեղծված արժեքի 1%-ը, իսկ ՀՆԱ–ի 0.3%-ը[1]:

Գեղարքունիքի մարզում գյուղատնտեսության բնագավառում իրականացվող աջակցության ծրագրերի ուղղությամբ կառավարության հատկացրած միջոցների ծավալը 2020թ.-ին կազմել է 29 մլրդ դրամ, իսկ 2021թ.-ին նախատեսվում էր հատկացնել 31.2 մլրդ դրամ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մարզում գործում է գյուղատնտեսության ոլորտում իրականացվող պետական օժանդակության ծրագրերի ընդամենը 38%-ը, մինչդեռ 2020թ.-ին մարզում արտադրվել է ՀՀ-ում թողարկված գյուղատնտեսական արտադրանքի 13.5%-ը՝ զիջելով միայն Արմավիրի և Արարատի մարզերին /գծապատկեր 1/:

[1] https://www.armstat.am/am/?nid=12&id=03001



ՀՀ-ում գյուղատնտեսության ոլորտում թողարկված համախառն արտադրանքը 2020թ.-ին[1]

Գեղարքունիքի մարզում իրականացվել է նախատեսված պետական օժանդակության ծրագրերի մի մասը, արդյունքում մշակվել է վարելահողերի ընդամենը 58%-ը, որը բավականին ցածր ցուցանիշ է: Անհրաժեշտ է նշել, որ 2020թ.-ին Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները կազմել են ընդամենը 222.2 հազ. հեկտար[2], ինչը փաստում է, որ հանրապետությունում առկա ընդհանուր վարելահողերի կեսից ավելին նպատակային չի օգտագործվել:

«Ամբերդ» հետազոտական կենտրոնի կողմից Գեղարքունիքի մարզի 70 գյուղացիական տնտեսություններում կատարված հարցումների արդյունքները փաստում են, որ բյուջետային ծրագրերի արդյունավետությունը դեռևս ցածր է և չի համապատասխանում ակնկալվող արդյունքներին: Հարցումների համար ընտրվել են Գեղարքունիքի մարզի Դդմաշեն, Լճաշեն, Նորատուս, Սարուխան, Ներքին Գետաշեն, Զոլաքար և Մեծ Մասրիկ համայնքների 10-ական գյուղացիական տնտեսություններ: Հայցվողներին առաջարկվել է գյուղատնտեսության պետական աջակցության 13 ծրագրերից յուրաքանչյուրի անհրաժեշտությունն ու արդյունավետությունը գնահատել 100-միավորային սանդղակով: Նրանց կողմից գյուղատնտեսության աջակցության ծրագրերի կարևորությունը գնահատվել է 53.8-56.1%, իսկ արդյունավետությունը՝ 36.1-39.6%: Այս ցուցանիշները բավականին ցածր են, և

[1] Աղբյուրը՝ Ազգային վիճակագրական կոմիտե: Գյուղատնտեսության համախառն արտադրանքը: https://www.armstat.am/file/article/marzer_2020_12.pdf

[2] https://armstat.am/file/article/canqer_2020.pdf

նման գնահատականները պահանջում են պարբերաբար վերանայել ծրագրերի իրականացման կառուցակարգերը:

Անասնապահության բնագավառում պետության կողմից լրիվ հովանավորությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում անհապաղ կատարվող աշխատանքներ են զանազան վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի անասնաբուժական ծառայությունները:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Գեղարքունիքի մարզում փոքր և միջին «խելացի» անասնաշենքներ կառուցվել են միայն Վարդենիս և Ճամբարակ համայնքներում:

Վերլուծությունները ցույց են տալիս, որ շահառուները կարևորում և արդյունավետ են գնահատում «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում» և «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրերը: Չնայած այն բանին, որ հարցվողները կարևորում են «Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում» և «Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին՝ մատչելի գներով պարարտանյութերի ձեռքբերման համար» ծրագրերը, սակայն արդյունավետության ցուցանիշները ցածր են: Պետք է նշել, որ մարզի տարածքի գյուղատնտեսության առանձնահատկություններով և գյուղացիական տնտեսությունների հետաքրքրություն չցուցաբերելու հանգամանքով պայմանավորված՝ ցանքատարածությունների կաթիլային ոռոգման համար նախատեսված միջոցների ձեռքբերման գծով լիզինգային ծրագրեր չեն իրականացվել:

2017-2018թթ.-ին մարզի բոլոր համայնքների գյուղացիական տնտեսություններին և անհատ ֆերմերներին ըստ իրենց հայտադիմումների՝ շուկայականից ցածր գներով տրամադրվել են ցորենի, գարու սերմացու, ազոտական, կալիումական և ֆոսֆորական պարարտանյութեր, ինչպես նաև դիզելային վառելանյութ: Մարզում որակյալ սերմացուի պակասը լրացնելու նպատակով անհրաժեշտ է «ՀՀ հացահատիկային և հատիկաընդեղեն որոշ մշակաբույսերի տեղական սերմնաբուծության ու սերմնարտադրության զարգացում» ծրագիրը դարձնել առավել հասցեական, քանի որ դրա պակասի պատճառով ներկայումս բարձրացել են սերմերի գները (օրինակ՝ գարու գինը):

2018 թվականին Գեղարքունիքի մարզում դադարեցվել են «Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով պարարտանյութերի ձեռքբերման համար» և «Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով դիզելային վառելիքի ձեռքբերման համար» սուբսիդավորվող ծրագրերը: Դիզվառելիքի ծրագիրն արդյունավետ էին գնահատել հարցվողների 20-30%-ը: Հարցում-

ների արդյունքները փաստում են, որ ծրագրերի իրականացման ընթացքում ի հայտ են եկել հետևյալ խնդիրները.

➢ Ծրագրում մեծ էր ռիսկի գործոնը, քանի որ տրամադրվող սուբսիդիան հաճախ չէր հասնում կոնկրետ հողօգտագործողին: Այն իրականում նպատակաուղղված էր սոցիալապես անապահով բնակչությանը, սակայն սուբյեկտիվ գործոնով պայմանավորված՝ բաժին էր հասնում սոցիալապես ապահով խավին:

➢ Պարարտանյութերի և դիզվառելիքի որակը շատ դեպքերում չէր համապատասխանում սահմանված պահանջներին: Պարարտանյութերի պարունակության մեջ ազոտը պետք է լիներ 34%, սակայն իրականում այն կազմում էր 28%:

➢ Վերոնշյալ ծրագրերի համար նախատեսված սուբսիդավորման գումարները վերաբաշխվել են «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում» ծրագրին:

ՀՀ կառավարության 2017թ. սեպտեմբերի 14-ի N39 արձանագրային որոշմամբ՝ մարզում արտոնյալ վարկերից օգտվելու հնարավորություն են ստացել միայն խոշոր տնտեսությունները, քանի որ արտոնությունը գործում էր բացառությամբ 3-10 մլն վարկի գումարի դեպքում: Հետագայում այս մոտեցումը վերանայվել է, և 2019 թվականից իրականացվում է նաև «Փոքր գյուղացիական տնտեսությունների վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիրը»:

Հարկ է նշել, որ օժանդակության ծրագրերի ցածր արդյունավետության պատճառով գյուղատնտեսության սուբսիդավորման ծրագիրը սահմանափակվում է գյուղատնտեսական վարկերի, ներդրանքների (սերմեր, պարարտանյութեր և դիզելային վառելիք) սուբսիդավորմամբ, սակայն աջակցության նման մեխանիզմը լուծում է ընթացիկ գործառնական խնդիրներ և չի ստեղծում հարակայուն զարգացման հիմք: Այս պարագայուն համակարգի գործունեությունն անարդյունավետ են դարձնում գյուղատնտեսական վարկերի սուբսիդավորման հետ կապված հետևյալ խնդիրները.

➢ բանկերը կիրառում են սպասարկման բարձր սակագներ, որոնց հետևանքով վարկի տոկոսադրույքը կրկին բարձրանում է՝ հողօտագործողների համար ստեղծելով հավելյալ ծախսեր,

➢ գյուղական համայնքներում բնակչության ֆինանսական գրագիտության ցածր մակարդակի պատճառով հողօտագործողները զրկվում են հետագա վարկավորման հնարավորությունից,

➢ տրամադրված վարկերը հաճախ օգտագործվում են ոչ նպատակային կերպով, ինչը հիմնովին իմաստազրկում է աջակցության ծրագիրը, ուստի ցանկալի է գյուղատնտեսական կոպերատիվներին տրամադրվող վարկի տոկոսադրույքը 3%-ից նվազեցնել 1%:

➢ «Գյուղատնտեսական հումքի մթերումների նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագրի մթերքների ցանկում ցանկալի է ընդգրկել նաև կարտոֆիլը: Գեղարքունիքի մարզում արտադրվում է 200 հազ. տոննա կարտոֆիլ, և գյուղացին ունի իրացման խնդիր, ուստի այս ծրագրի միջոցով պետությունը կարող է խթանել կարտոֆիլի իրացման գործընթացը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Գեղարքունիքի մարզում իրացման շուկայի ձևավորման հետ կապված դժվարությունները պայմանավորված են տեղական շուկայում ցածր պահանջարկով, գյուղմթերքներ գնող-իրացնող ենթակառուցվածքների բացակայությամբ կամ դրանց ձևավորման դանդաղ ընթացքով, արտահանման դժվարություններով: Այս առումով, գյուղատնտեսության վարկավորման գործընթացում անհրաժեշտ է բարելավել գրավադրման մեխանիզմը, մասնավորապես գրավի առարկայի շրջանակում, հողօտագործողներին տրամադրել մատչելի տոկոսադրույք, վարկավորման իրատեսական ժամկետներ՝ ապահովելով պետական երաշխիքներ:

Գեղարքունիքի մարզում 2018-2020թթ.-ին «ՀՀ գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության» ծրագրով գյուղատնտեսական տեխնիկա ձեռք բերելու համար դիմածների շուրջ 70%-ի պահանջներն են բավարարվել: Մերժված ծրագրերը չեն ունեցել վարկի մարման համապատասխան նյութական գրավային ապահովվածություն և հիմնավորումներ: Ծրագրով նախատեսված էր, որ լիզինգառուն պետք է վճարի լիզինգի առարկայի ձեռքբերման գնի 20%-ի չափով կանխավճար, որը բավականին բարձր լինելու պատճառով գյուղացիական տնտեսություններից շատերը դժվարությամբ են վճարել: Այս առումով նպատակահարմար կլիներ նվազեցնել լիզինգի կանխավճարը, հատկապես սահմանամերձ և բարձր լեռնային գյուղերում (օրինակ՝ Վահան, Արծվաշեն, Սոթք, Վերին Շորժա, Արփունք, Ավազան, Կախակն, Արեգունի և այլն): Խոցելի համայնքներում գյուղատնտեսական տեխնիկայով ապահովվածությունը բացի տնտեսականից, կնպաստի նաև պետական անվտանգության խնդիրների լուծմանը:

Մարզում ԳԶՀ մարզային կառույցի (Մարզային աջակցության թիմի) նախաձեռնությամբ ստեղծվել են համայնքային 28 սպառողական կորպորատիվներ՝ «Արոտօգտագործողների միավորում»: Ծրագրի իրականացման արդյունքում համայնքների սպառողական կոպերատիվներն անհատույց կարգով ստացել են իրենց համայնքին անհրաժեշտ միջոցներ, այդ թվում՝ տրակտորներ, կցվող սարքավորումներ, հարմարանքներ և գործիքներ, ինչպես նաև հեռագնա արոտավայրերի ջրարբիացման ջրագծեր: Ուսումնասիրությունները վկայում են, որ «Գյուղատնտեսական ռեսուրսների կառավար-

ման և մրցունակության զարգացման» ծրագրի շրջանակներում համայնքներում ստեղծվել են 47 կոոպերատիվներ, որոնց տրամադրվել է շուրջ 300 միավոր գյուղտեխնիկա: Սակայն դրա հիմնական մասը բարոյապես մաշված էր, ինչի արդյունքում օգտագործվում էին նախատեսվածից շատ վառելիք, պահեստամասեր, հետևաբար բարձրանում էին շահագործման ծախսերը և ծառայությունների սակագները: Եթե ըստ նորմայի՝ տարեկան պետք է փոխվեր տեխնիկայի 10%-ը, փոխվում էր ընդամենը 3%-ը: Այս տեսանկյունից, գյուղատնտեսական արտադրության արդյունավետ զարգացմանը խոչընդոտում են գյուղացիական տնտեսությունների փոքր չափերը, գյուղատնտեսության և գյուղի սպասարկող ենթակառուցվածքների դանդաղ ձևավորումը: Կարելի է եզրակացնել, որ որքան շատ լինեն գործող ծրագրերը, այնքան կարձանագրվեն հողի, նյութական ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձր ցուցանիշներ:

Մարզում արտադրական ուղղություններով գյուղատնտեսական հումքի վերամշակման, տնտեսավարող սուբյեկտների կարողությունների ուժեղացման և ոլորտում ձեռնարկատիրական գործունեության խթանման նպատակով՝ որպես պետական աջակցության կարևոր մեխանիզմ, նախընտրելի է իրականացնել նպատակային վարկավորում:

Գյուղատնտեսության ֆինասավորման բարենպաստ պայմանների ստեղծման և վարկավորման խթանման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի ապահովագրական համակարգի ներդրումը, որն ունի դեպի այս ոլորտ ֆինանսական ռեսուրսների ուղղորդման, գյուղատնտեսության զարգացման և գործող տնտեսությունների եկամուտների ավելացման նպատակ: Այս առումով, բնակլիմայական առանձնահատկություններով պայմանավորված՝ գյուղատնտեսական ապրանքների արտադրական ռիսկերի կառավարման գործում անհրաժեշտ է ներդնել ապահովագրության այնպիսի մեխանիզմ, որը թույլ կտա չեզոքացնել կամ նվազագույնի հասցնել հողօգագործողների եկամտի կորուստները և հնարավոր բացասական զարգացումները: Վարկավորման տեսանկյունից ելնելով՝ այն կապահովի գյուղացիական տնտեսությունների ստանձնած պարտավորությունները ժամանակին կատարելու երաշխիքներ, որոնք ուղղակիորեն կազդեն վարկավորման ծավալների մեծացման, վարկի տոկոսադրույքի նվազեցման վրա: Հետևաբար, ապահովագրական համակարգի ներդրումն իր էական ազդեցությունն ունի վարկավորման գործընթացի վրա, քանի որ փոխհատուցում է վարկերից առհասարակ չօգտվող գյուղացիական տնտեսությունների այն կորուստները, որոնք կարող են առաջանալ բերքի ամբողջական կամ մասնակի վնասի դեպքում:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գյուղացիական տնտեսությունների տնտեսական գործունեության մեջ բացակայում է հաշվապահա-

կան հաշվառման գործառույթը: Հողօգտագործողները շահագրգռված չեն ներդրումներ կատարել հողերի բերրիությունը պահպանելու համար, ինչը բացատրվում է անշարժ գույքի /հողի հարկի/ և վարձավճարների հաստատագրված դրույքաչափերի կիրառման ու ապահովագրական մեխանիզմի գրեթե բացակայությամբ:

Գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության բարձրացման նպատակով գյուղացիներին անհրաժեշտ է տրամադրել համապատասխան խորհրդատվություն ագրոտեխնիկական միջոցառումների իրականացման վերաբերյալ՝ միաժամանակ նրանց համար ապահովելով անխափան և մատչելի գներով ջրամատակարարում:

Գեղարքունիքի մարզը մեծ հնարավորություններ ունի նաև ոչխարաբուծության զարգացման համար, որը ենթադրում է հետևյալ համալիր միջոցառումների իրականացում.

➢ հստակեցնել ոչխարաբուծական մթերքների (միս, կաթնամթերք) և հումքի (բուրդ, կաշեհումք) արտադրության ծավալների ավելացման ուղիները,

➢ բարելավել ոչխարի տեղական ցեղերի մթերատու հատկանիշների բարելավման և ոչխարաբուծության ոլորտում իրականացվող տոհմասելեկցիոն աշխատանքների հիմնական սկզբունքները.

➢ նախանշել ոչխարաբուծության զարգացման շրջանակում արոտավայրերի արդյունավետ կառավարմանն ուղղված պետական աջակցության մեխանիզմներ:

Հարկ է նշել, որ գյուղատնտեսության պետական օժանդակության ծրագրերով նախատեսված ֆինանսավորող միջոցները հիմնականում ուղղված են այնպիսի խնդիրների լուծման, որոնք ունեն իրավիճակի պահպանման, այլ ոչ թե գյուղատնտեսության զարգացման նպատակ, խիստ սահմանափակ ու փոփոխվող են, գրեթե չեն դրսևորում աճի միտում: Դրանք անհրաժեշտ է ուղղել մասնավոր կապիտալի համար բարենպաստ պայմանների ստեղծմանը, որը ֆինանսական շուկայի և շուկայական մեխանիզմների միջոցով կուղղորդի դեպի գյուղատնտեսության զարգացում:

Արդեն իսկ վարկերի ծանրության տակ ապրող գյուղացուն անհրաժեշտ է տալ ուղիղ օգնություն, այսինքն՝ գարնանացանի ժամանակահատվածում արտոնյալ պայմաններով տրամադրել ցածր սակագնով ոռոգման ջուր կամ հնարավորության դեպքում՝ մատչելի գնով սերմեր և պարարտանյութ՝ էականորեն նվազեցնելով թողարկված արտադրանքի ինքնարժեքը, որպեսզի պետական օժանդակության արդյունքում նա չհայտնվի նոր վարկային բեռի տակ:

Այսպիսով, Գեղարքունիքի մարզում գյուղատնտեսության ոլորտում արտադրության զարգացման և ընդլայնման համար առկա են հետևյալ հիմնախնդիրները.

- գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության և կենդանիների մթերատվության բարձրացում,
- կենդանիների վարակիչ հիվանդությունների ախտորոշում, մսամթերքի անվտանգության լաբորատոր փորձաքննության իրականացում,
- գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում վնասակար օրգանիզմներով վարակվածության նվազեցում, որը կհանգեցնի գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության բարձրացմանը,
- մարզը կենդանիների վարակիչ հիվանդությունների ներթափանցումից պաշտպանում, դրանց օջախների վերացում, տարածման կանխարգելում, կայուն համաճարակային վիճակի և կենդանական ծագման հումքի, մսամթերքի արտադրության, վերամշակման, պահպանման, իրացման, ինչպես նաև արտահանվող բեռների անվտանգության ապահովում:

Մարզում նախընտրելի արտադրական ուղղություններով գյուղատնտեսական հումքի վերամշակման, տնտեսավարող սուբյեկտների կարողությունների ուժեղացման և ոլորտում ձեռնարկատիրական գործունեության խթանման նպատակով անհրաժեշտ է իրականացնել գյուղատնտեսներին մատչելի նվազագույն շեմով նպատակային վարկավորում՝ ավելացնելով վարկառուների թիվը:

Գյուղատնտեսական արտադրություն կազմակերպելու և իրացման խնդիրը լուծելու նպատակով անհրաժեշտ է գյուղացիական տնտեսությունների և վերամշակողների համար ստեղծել պետական տեղեկատվական-վերլուծական կենտրոն, որի հիմնական նպատակը կլինի գյուղացիական տնտեսություններին տրամադրել հավաքական վերլուծական տեղեկատվություն՝ շուկայում գյուղմթերքների պահանջարկի, դրանց վերամշակման, իրացման, արտահանման և այլ խնդիրների վերաբերյալ:

Այսպիսով, վերոնշյալ հիմնախնդիրների լուծումը և համապատասխան միջոցառումների իրականացումը նպաստավոր պայմաններ կստեղծեն առաջադրելու ուղիներ՝ գյուղատնտեսության ոլորտի պետական օժանդակության ծրագրերի իրականացման գործընթացը բարելավելու նպատակով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ
ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ

1. «ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը գումար հատկացնելու և ՀՀ հողօգտագործողներին մատչելի գներով պարարտանյութի ձեռքբերման

պետական աջակցության ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում, 2012:
2. «ՀՀ հողօգտագործողներին մատչելի գներով ազոտական պարարտանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագիրը հաստատելու և ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը գումար հատկացնելու մասին» ՀՀ կառավարության որոշում, 2012 :
3. ՀՀ կառավարության 2011թ-ի գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների իրականացման արդյունքների մասին ՀՀ Գյուղատնտեսության նախարարության հաշվետվություն:
4. «ՀՀ սահմանամերձ համայնքներին տրվող սոցիալական աջակցության փոխհատուցման ենթակա ծավալների, փոխհատուցման կարգի և փոխհատուցում ստացող սահմանամերձ համայնքների բնակավայրերի ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում, 2014:

2. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բայադյան Ա. Հ.-ՀՀ գյուղատնտեսական արտադրության զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները, Երևան, 2013:
2. Դավթյան Գ., Մարգարյան Լ., Աբգարյան Վ., Գրիգորյան Վ., Ջավադյան Հ., Սիմոնյան Ռ., Դանիելյան Մ., Հայկյան Ա., Գյուղատնտեսական արտադրության կազմակերպում, Երևան 2004:

ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅՔԵՐ

1. http//www.report.gov.am - ՀՀ կառավարության գործունեության արդյունքների հրապարակման պաշտոնական կայքէջ:
2. http://agroecoarm.com/- Ագրոարդյունաբերությունը Հայաստանում:
3. https://ampop.am/clash-of-opinions-on-agriculture/:
4. https://mineconomy.am/- - ՀՀ Էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքէջ:
5. http://gegharkunik.mtad.am/- ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի պաշտոնական կայքէջ:

EXISTING PROBLEMS IN GEGHARKUNIK REGION IN THE PROCESS OF IMPLEMENTATION OF STATE SUPPORT PROGRAMS IN AGRICULTURE

HERGNYAN MARIAM
PhD in Economics, Associate Professor,
Vice-Dean of the Faculty of Economics, GSU
e-mail: m.hergnyan@gsu.am:
MARY BALAGOZYAN
Graduate Master student of the "Economics"
Department, Faculty of Economics, GSU
e-mail: balagozyan98@mail.ru:

The article is dedicated to revealing the existing problems in the process of implementation of state support programs in the field of agriculture in Gegharkunik region. Economic development programs, as the main form of state regulation of the economy, orientate the economic activity of the state towards the priority solution of the most strategically important issues, the implementation of which is based on a system of concrete measures. For the development of agriculture as a strategic priority of the RA economy, state support programs are of vital importance.

The state support programs proposed by the Government of the Republic of Armenia are based on the vision of promoting high-value, innovative, export-oriented, industrial agriculture, which enable beneficiaries to create and develop their agribusiness in line with the requirements of the modern world.

The process of implementation of the state support programs for the agricultural sector in Gegharkunik region for 2018-2020 was analyzed, the existing problems for the development and expansion of production in the agricultural sector were revealed. Taking into account the peculiarities of crop and livestock development, mechanisms have been proposed to solve them, which will provide opportunities for the implementation or expansion of activities that produce, sell, and expect high-profit agricultural products.

As a result of the analysis, relevant conclusions and recommendations were made.

Key words: state aid programs, beneficiary, leasing, advance payment, interest rate subsidy, return guarantee.

ПРОГРАММЫ ГОСУДАРСТВЕННОЙ ПОДДЕРЖКИ В СФЕРЕ СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА В ГЕГАРКУНИКСКОЙ ОБЛАСТИ: ПРОБЛЕМЫ РЕАЛИЗАЦИИ

ЕРГНЯН МАРИАМ
Кандидат экономических наук, доцент,
Замдекана экономического факультета ГГУ
электронная почта: m.hergnyan@gsu.am:
БАЛАГОЗЯН МЕРИ
Выпускница магистратуры отделения
«Экономика» экономического факультета ГГУ
электронная почта: balagozyan98@mail.ru

Статья посвящена выявлению существующих проблем в процессе реализации программ государственной поддержки в сфере сельского хозяйства в Гегаркуникской области.

Программы экономического развития, как основная форма государственного регулирования экономики, ориентируют экономическую деятельность государства на первоочередное решение важнейших стратегических задач, реализация которых обосновывается системой конкретных мер. Для развития сельского хозяйства как стратегически важной сферы экономики РА, программы государственной поддержки имеют жизненно важное значение. Основной целью программ государственной поддержки сельского хозяйства, предложенных правительством РА, является продвижение концепции высокоэффективного, инновационного, экспортируемого, промышленного сельского хозяйства, позволяющий бенефициарам шагать в ногу с требованиями современного мира - создавать и развивать свой агробизнес.

Был анализирован процесс реализации программ государственной помощи в сфере сельского хозяйства в Гегаркуникском марзе с 2018 по 2020 гг., выявлены основные проблемы развития и расширения производства в сфере сельского хозяйства. С учетом особенностей развития растениеводства и животноводства, предложены механизмы их решения, которые предоставят возможности для реализации или расширения деятельности по производству, продаже и ожидаемому высокоприбыльному производству сельхозпродукции.

В результате анализа были сделаны соответствующие выводы и предложения:

Ключевые слова: *программы государственной поддержки, бенефициар, лизингополучатель, аванс, субсидирование процентных ставок, гарантия возвратности.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 13.08.2021թ.:
Հոդվածը գրախոսվել է 18.09.2021թ.: